Մրցույթի հայտարարություն

«Երևանի Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն «Երևանի Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն,

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճեն,

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Երևանի Սամվել Շահմուրադյանի անվան հ.85 հիմնական դպրոցում 2021 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի **նոյեմբերի 29-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21:

Հավակնորդների փաստաթղթերի ընդունման պատասխանատուներ՝ խորհրդի նախագահ Մ. Առաքելյան և խորհրդի անդամ Հ. Երեմյան:

Տեղեկությունների համար դիմել՝ հեռախոս՝ 010- 28-77-27:

էլ. հասցե՝ yerevan85@schools.am